

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2012թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ
ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական հաշվետվություններ	
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	5
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ No. 260

Ներկայացվում է «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի խորհրդին

Մենք առողիտի ենք ենթարկել «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կից ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2012թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը և այլ բացատրական ծանոթագրությունները:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն ՖՀՄՍ-ների: Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը նրա կարծիքով թույլ կտա կազմել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

Առողիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված առողիտի արդյունքում արտահայտել կարծիք սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք առողիտն իրականացրինք առողիտի միջազգային ստանդարտներով: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և առողիտը պլանավորենք ու իրականացնենք՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Առողիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել առողիտորական ապացույցներ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են առողիտորի դատողությունից և ներառում են նաև այնպիսի էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը, որոնք կարող են պայմանավորված լինել թե խարդախությամբ և թե սխալներով: Այս ռիսկը գնահատելիս առողիտորը դիտարկում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և վերջիններիս ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը, նպատակ ունենալով մշակել այդ հանգամանքներին համապատասխանող առողիտորական ընթացակարգեր՝ բայց ոչ կարծիք արտահայտել ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Առողիտորական աշխատանքները ներառում են նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամուտության, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:


Ձևափոխված կարծիքի հիմքեր

1. Կազմակերպությունում չի իրականացվել հիմնական միջոցների գույքագրում: Մենք հնարավորություն չենք ունեցել այլ աուդիտորական ընթացակարգերի կիրառման միջոցով ձեռք բերել բավարար ապացույցներ 31.12.2012թ. դրությամբ շարժական հիմնական միջոցների մնացորդի (1,368,219 հազար դրամ) վերաբերյալ: Քանի որ հիմնական միջոցների մաշվածությունը մասնակցում է ֆինանսական արդյունքների որոշմանը, մենք չենք կարողացել որոշել 2012թ. համար ֆինանսական արդյունքների և 31.12.2012թ. դրությամբ չբաշխված շահույթի մնացորդի ճշգրտումների անհրաժեշտությունը:

2. Ուսանողների ուսման վարձերի սինթետիկ (ընդհանրացված) հաշվառումը իրականացվում է հաշվապահական հաշվառման ՀՄ համակարգչային ծրագրում, իսկ անալիտիկ (մանրամասնեցված) հաշվառումը՝ առանձին ծրագրում: Անալիտիկ հաշվառման ծրագրում հաշվեգրումները (դեբիտորական պարտքերի ձևավորումները) կատարվում են ուսումնական կիսամյակների կտրվածքով՝ սկզբի դրությամբ: Ուսման վարձերի գծով մնացորդների վերաբերյալ տեղեկատվությունը ծրագրից արտահանվում է միայն տվյալ օրվա դրությամբ և նմանատիպ տեղեկատվություն չի ապահովվում անցած ամսաթվերի դրությամբ: Ուսման վարձերի մասով չի ապահովված պարտքերի անալիտիկ և սինթետիկ հաշվառման տվյալների համադրելիությունը՝ ժամանակի ցանկացած պահին: Մենք հաստատվել ենք որպես կազմակերպության աուդիտոր 31.12.2012թ. հետո և հնարավորություն չենք ունեցել այլ աուդիտորական ընթացակարգերի կիրառման միջոցով ձեռք բերել բավարար ապացույցներ 31.12.2012թ. դրությամբ ուսման վարձերի մասով 137,777 հազար դրամ դեբիտորական պարտքերի և 608,515 հազար դրամ ստացված կանխավճարների մնացորդների վերաբերյալ:

Կարծիք

Մեր կարծիքով, բացառությամբ Ձևափոխված կարծիքի հիմքեր պարագրաֆում նկարագրված հարցերի հնարավոր ազդեցության, համախմբված ֆինանսական հաշվետվությունները «Երևանի պետական համալսարանի» ՊՈԱԿ-ի համախմբված ֆինանսական վիճակի՝ առ 31.12.2012թ., ինչպես նաև այդ ամսաթվի դրությամբ ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ և իրական պատկեր՝ համաձայն ՖՀՄՄ-ների:


Թաթուլ Մովսիսյան

Գլխավոր տնօրեն

Լիլիթ Գրիգորյան

Աուդիտոր

27 հունիսի, 2013թ.,

ք.Երևան, Ամիրյան 4/6



000 դրամ

	Ստոր- ն	31/12/12	31/12/11
Ակտիվ			
Հիմնական միջոցներ	5	47,630,432	48,401,241
Ոչ նյութական ակտիվներ	6	26,460	24,036
Կենսաբանական ակտիվներ		85	-
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար	7	9,557	52,422
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		47,666,534	48,477,699
Պաշարներ	8	146,177	152,844
Կանխավճարներ պաշարների և ծառայ-ների համար	9	11,817	27,364
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	10	166,801	237,324
Կանխավճար շահութահարկի գծով		46,733	33,573
Կանխավճարներ հարկերի և պարտադիր վճարների գծով	11	7,545	11,648
Ավանդներ	12	71,060	45,787
Դրամական միջոցներ	13	1,157,039	1,303,404
Այլ ընթացիկ ակտիվներ	14	7,999	12,094
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		1,615,171	1,824,038
Ընդամենը ակտիվներ		49,281,705	50,301,737
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կուտակված շահույթ	15	38,831,317	39,580,681
Պահուստային կապիտալ		169,894	169,894
Ընդամենը սեփական կապիտալ		39,001,211	39,750,575
Փոխառություններ		470	470
Հետաձգված հարկային պարտավորություն	16	6,230,135	6,392,150
Ակտիվներին վերաբերող շնորհներ	17	2,847,660	2,974,561
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		9,078,265	9,367,181
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	18	62,824	67,884
Կանխավճարներ ծառայությունների համար	19	658,578	618,980
Շահութահարկի գծով պարտավորություն		5,316	6,151
Այլ հարկերի և պարտ. վճարների գծով պարտավորություն	20	73,669	95,319
Աշխ.-ի և այլ կարճ.հատ. գծով պարտավորություն	21	180,851	170,524
Եկամուտներին վերաբերող շնորհներ	22	215,682	219,392
Այլ ընթացիկ պարտավորություններ	23	5,309	5,730
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		1,202,229	1,183,980
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		49,281,705	50,301,737

Ռեկտոր

Ա.Միսոնյան

Գլխավոր կասկադ

Ռ.Գրիգորյան

9-58 էջերի ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը



**«Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն
2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

ՄԻԼ ԴՐԱՄ	Ծանոթ- ն	2012	2011
Հասույթ	25	6,384,800	6,523,594
Վաճառքի ինքնարժեք	26	(5,782,006)	(5,659,977)
Համախառն շահույթ		602,794	863,616
Իրացման ծախսեր		(1,973)	(2,155)
Վարչական ծախսեր	27	(556,278)	(569,667)
Այլ եկամուտներ (ծախսեր)	28	(83,296)	(158,050)
Գործառնական գործունեությունից շահույթ (վնաս)		(38,753)	133,744
Ֆինանսական եկամուտներ		52,965	64,505
Փոխարժեքային տարբերությունից օգուտ		8,900	17,111
Շահույթը մինչև հարկումը		23,112	215,359
Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)	29	43,992	(155,389)
Զուտ շահույթ		67,104	59,971
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Համապարփակ ֆինանսական արդյունքների հանրագումար		67,104	59,971

Ռեկտոր

Ա. Սիմոնյան

Գլխավոր հաշվապահ

Ռ. Գրիգորյան



**«Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ
Մեկնական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն
2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար**

Մ000 դրամ

	Ծանոթ- ն	Կանոնա- դրական կապիտալ	Կուտակված շահույթ	Պահուս- տային կապիտալ	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2011	32	-	39,520,711	169,894	39,690,605
Տարվա զուտ շահույթ			59,971	-	59,971
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2011		-	39,580,682	169,894	39,750,576
Տարվա զուտ շահույթ		-	67,104	-	67,104
Կապիտալի նվազեցում		-	(816,468)	-	(816,468)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2012		-	38,831,318	169,894	39,001,212

Ռեկտոր

Գլխավոր կազմակերպիչ



Ա. Մինոյան

Ռ. Գրիգորյան

‘000 դրամ	Ծանոթ- ն	2012	2011
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր	33		
վաճառքներից		6,432,598	6,470,869
այլ գործունեությունից		1,637,593	1,608,560
նյութերի, ապրանքների ձեռք բերումից		(184,778)	(260,929)
աշխատանքների, ծառայությունների ձեռք բերումից		(645,403)	(645,178)
վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից		(5,062,623)	(4,960,737)
հարկեր, պարտադիր վճարներ		(930,837)	(1,003,526)
այլ գործունեությունից		(576,737)	(660,196)
Գործառնական գործունեությունից դրամական գուտ հոսքեր		669,813	548,865
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր			
հիմնական միջոցների վաճառքից		2,073	1,208
տոկոսների ստացումից		57,170	67,629
ավանդների տրամադրումից		(55,006)	(10,000)
տրամադրված ավանդների մարումից		30,000	-
հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումից		(859,049)	(740,129)
Ներդրումային գործունեությունից դրամական գուտ հոսքեր		(824,812)	(681,292)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր			
փոխառությունների ստացումից		-	470
Ֆինանսական գործունեությունից դրամական գուտ հոսքեր		-	470
Ընդամենը դրամական միջոցների գուտ հոսքեր		(154,999)	(131,957)
արտարժույթի փոխարժեքային տարբերություններ		8,633	14,064
Հրամական միջոցների մնացորդը առ 1 հունվարի		1,303,404	1,421,297
Հրամական միջոցների մնացորդը առ 31 դեկտեմբերի		1,157,038	1,303,404



Ռեկտոր

Գլխավոր ինքնակառավար

Ա. Միմոնյան

Ռ. Գրիգորյան

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Կազմակերպության նկարագիրը և գործունեությունը

«Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ նաև՝ Կազմակերպություն) հիմնադրվել է 2002թ.-ին:

Կազմակերպությունը ունի

ա) երեք դուստր ընկերություն՝

- «ԵՊՀ տպագրատուն» ՍՊԸ,
- «ԵՊՀ հրատարակչություն» ՍՊԸ, և
- «ԵՊՀ երկրաբանական հետազոտությունների կենտրոն» ՍՊԸ:

բ) երկու առանձացված ստորաբաժանում՝

- ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղ և
- ԵՊՀ-ի «Սինքրոտրոնային ճառագայթման օգտագործմամբ գիտական հետազոտությունների կենտրոն» գիտահետազոտական ինստիտուտ:

Կազմակերպությունը չունի ասոցիացված կազմակերպություններ և համատեղ վերահսկվող միավորներ:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ընդգրկում են Կազմակերպությունը, իր դուստր ընկերությունները և առանձացված ստորաբաժանումները:

Կազմակերպության գործունեության հիմնական տեսակները՝

- բարձրագույն, միջին, հետբուհական մասնագիտական, հանրակրթական և լրացուցիչ կրթության կազմակերպում,
- օտարերկրյա դիմորդների նախապատրաստական կրթության կազմակերպում,
- մշակույթի բնագավառում կրթական գործունեության իրականացում,
- գիտամանկավարժական կադրերի պատրաստում, վերապատրաստում, որակավորման բարձրացում,
- գիտամանկավարժական կադրերի պատրաստում, վերապատրաստում, որակավորման բարձրացում,
- գիտահետազոտական, գիտատեխնիկական, արտադրական աշխատանքների իրականացում, դրանց արդյունքների առևտրայնացում,
- խորհրդատվական, փորձագիտական ծառայությունների մատուցում,
- հրատարակչական, տպագրական գործունեության ծավալում և դրա արդյունքների իրացում,
- միջազգային ուսումնական և գիտատեխնիկական ծրագրերի իրականացում,
- ԵՊՀ-ի աշխատողների, սովորողների և այլ անձանց հանրային սննդի, հանգստի, բուժման, կենցաղի կազմակերպում և սպասարկում:

Աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը 2012թ. կազմել է 3077 անձ և 2011թ.՝ 3084 անձ:

Կազմակերպությունն ունի 22 ֆակուլտետ, 47 մասնագիտություն, 18,218 ուսանող, որոնցից 3,070-ի ուսման վարձը լրիվ փոխհատուցվում է պետության կողմից ուսանողական նպաստի ձևով:

Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ ք.Երևան, Ալեք Մանուկյան 1: Կազմակերպությունը, բացի Ալեք Մանուկյան 1 հասցեից, գործունեություն է իրականացնում նաև Աբովյան 52 (Թիվ 8 մասնաշենք), Չարենցի 8 (Թիվ 5 մասնաշենք), Չարենցի 6 (Թիվ 7 մասնաշենք),

Մաշտոց 52 (Հյուրերի տուն), Կիևյան 1/ա (Քաղ. պաշտ-պանության մասնաշենք), Աճառյան 31 (Քենդլ) հասցեներում, ինչպես նաև ք.Իջանում (մ/ճ), Ծաղկաձորի, Հանքավանի, Բյուրականի ուսումնական բազաներում և Դիլիջանում (ճամբար):

ՀՀ կառավարության 2012թ մայիսի 24-ի թիվ 675-Ն որոշմամբ հիմնադրվել է «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամ, համաձայն որի, ՀՀ կառավարության 2007թ մայիսի 31-ի թիվ 729-Ա որոշմամբ «ԵՊՀ» ՊՈԱԿ սինքրոտրոնային ճառագայթման օգտագործմամբ գիտական հետազոտությունների կենտրոն» գիտահետազոտական ինստիտուտ հիմնարկին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացված Երևան քաղաքի Հ.Աճառյան 31 հասցեում գտնվող 6018.2 քառ. մետր ընդհանուր մակերեսով շենքային համալիրը անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացվել է «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամին և գործունեությունը իրականացվում է նշված հիմնադրամի միջոցով:

1.2. Կառավարման համակարգը

Կազմակերպության կառավարումը հիմնված է իր ինքնավարության վրա՝ միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ, Կազմակերպության խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորի գործառույթների իրականացմամբ: Կազմակերպության խորհուրդն ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմին է, որն ստեղծվում է 5 տարի ժամկետով: Խորհուրդը կազմված է 72 անդամից՝ որից

- 18-ը՝ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ,
- 18-ը՝ սովորողներ,
- 18-ը՝ հիմնադիր ներկայացուցիչներ են՝ առաջադրված ՀՀ վարչապետի կողմից պետական պաշտոն զբաղեցնող անձանցից,
- 18-ը՝ լիազոր մարմնի ներկայացուցիչներ են տնտեսության տարբեր ոլորտներից:

Կազմակերպության խորհրդի կողմից նախագահ է ընտրվել ՀՀ նախագահ Ս.Սարգսյանը:

Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումներն են ֆակուլտետները, գիտահետազոտական ինստիտուտները, մասնաճյուղերը, ամբիոնները, կենտրոնները, բաժինները, լաբորատորիաները, գիտական գրադարանը, հրատարակչությունը և այլ ստորաբաժանումներ:

Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների կարգավիճակը, գործառույթները, իրավասությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, ԵՊՀ-ի կանոնադրությամբ և իրենց կանոնադրություններով:

2. Պատրաստման հիմունքները

2.1. Համապատասխանությունը ՖՀՄՄ-ներին

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին (ՖՀՄՄ) համապատասխան:

2.2. Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով:

2.3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթները

Հայաստանի Հանրապետության արժույթը ՀՀ դրամն է, որը Կազմակերպության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է:

Ֆինանսական տեղեկատվությունը ցույց է տրվում հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

2.4. Դատողությունների, գնահատումների և ենթադրությունների կիրառումը

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմումը ղեկավարությունից պահանջում է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք նշանակալի ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա: Մասնավորապես դա կարող վերաբերվել ծանոթագրություններ 5-ին՝ «Հիմնական միջոցներ», 10-ին՝ «Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր», 19-ին՝ «Կանխավճարներ ծառայությունների համար»: Գնահատումները և հիմքում ընկած ենթադրությունները վերանայվում են:

2.5. Կազմակերպության կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների՝ հրապարակման համար ստորագրման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել՝

- | | |
|--|---|
| • ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» | Ուժի մեջ է մտնում 2015թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար |
| • ՖՀՄՍ 10 «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ» | Ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար |
| • ՖՀՄՍ 11 «Համատեղ համաձայնեցում» | Ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար |
| • ՖՀՄՍ 12 «Այլ կազմակերպություններում մասնակցության բացահայտում» | Ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար |
| • ՖՀՄՍ 13 «Իրական արժեքի չափում» | Ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար |

Կազմակերպությունը այդ ստանդարտները և մեկնաբանությունները (փոփոխությունները) կիրառելու է՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

Ղեկավարության գնահատմամբ դրանց հնարավոր ազդեցությունը Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա էական չի կարող լինել:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիր

3.1. Համախմբման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների շրջանակը

Կազմակերպությունը համախմբում է բոլոր դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները, որոնք գործում են ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտերկրում:

Դուստր է այն ընկերությունը, որը վերահսկվում է Կազմակերպության կողմից:

Վերահսկման հանգամանքը առկա է, երբ Կազմակերպությունը, ուղղակիորեն կամ անուղղակիորեն՝ դուստր ընկերությունների միջոցով, տնօրինում է որևէ ընկերությանը ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի կեսից ավելին, բացառությամբ այն դեպքերի, երբ ակնհայտ է, որ նման քանակով ձայների իրավունքը հնարավորություն չի տալիս վերահսկել տվյալ ընկերությունը: Ընկերությունը համարվում է վերահսկող նույնիսկ այն դեպքում, երբ տնօրինում է ձայների կեսը կամ դրանից պակաս, եթե այն.

ա) կառավարում է ձայների կեսից ավելին՝ այլ ներդրողների հետ ունեցած համաձայնագրերի հիման վրա,

բ) իրավունք ունի որոշել ընկերության ֆինանսական և տնտեսական (գործառնական) քաղաքականությունը՝ կանոնադրության կամ պայմանագրի համաձայն,

գ) իրավունք ունի նշանակել և ազատել տնօրենների խորհրդի կամ դրան համարժեք կառավարման մարմնի անդամների մեծամասնությանը,

դ) տնօրինում է ձայների մեծամասնությանը՝ տնօրենների խորհրդում կամ դրան համարժեք կառավարման մարմնում:

Համախմբման ընթացակարգերը

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները կազմելիս Կազմակերպության և դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները համախմբվում են տող առ տող՝ գումարելով ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի, եկամուտների և ծախսերի համապատասխան հոդվածները:

Որպեսզի համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնեն ֆինանսական տեղեկատվություն խմբի, որպես մեկ կազմակերպության համար, կատարվում են հետևյալ քայլերը՝

(ա) յուրաքանչյուր դուստր ընկերությունում մայր կազմակերպության ներդրման հաշվեկշռային արժեքը և յուրաքանչյուր դուստր ընկերության սեփական կապիտալում մայր կազմակերպության բաժինը փոխբացառվում են.

(բ) որոշվում են համախմբված դուստր ընկերությունների հաշվետու ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում չվերահսկող բաժնեմասերը.

(գ) համախմբված դուստր ընկերությունների գուտ ակտիվներում չվերահսկող բաժնեմասերը որոշվում են մայր կազմակերպությանը պատկանող բաժնեմասից առանձին՝ Զուտ ակտիվներում չվերահսկող բաժնեմասերը բաղկացած են՝

(i) սկզբնական միավորման ամսաթվի դրությամբ այդ չվերահսկող բաժնեմասերի գումարից, որը հաշվարկվել է ՖՀՄՍ 3-ին համապատասխան.

(ii) միավորման ամսաթվից հետո սեփական կապիտալում տեղի ունեցած փոփոխություններում չվերահսկող բաժնեմասերից.

Ներխաժնեային մնացորդները, գործարքները, եկամուտն ու ծախսերը ամբողջությամբ բացառվում (փոխմարվում) են:

Դուստր ընկերության եկամուտներն ու ծախսերը ներառվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ սկսած ձեռքբերման ամսաթվից: Դուստր ընկերության եկամուտներն ու ծախսերը պետք է հիմնված լինեն ակտիվների և պարտավորությունների՝ ձեռքբերման ամսաթվի դրությամբ մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքների վրա:

Չվերահսկող բաժնեմասերը համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պետք է ներկայացվեն սեփական կապիտալում՝ մայր կազմակերպության սեփականատերերի սեփական կապիտալից առանձին:

Դուստր ընկերություններում ներդրումների հաշվառումը առանձին ֆինանսական հաշվետվություններում

Կազմակերպության առանձին ֆինանսական հաշվետվություններում դուստր ընկերություններում կատարված ներդրումները հաշվառում են ինքնարժեքով:

3.2. Հիմնական միջոցներ

Ճանաչում

Հիմնական միջոցի յուրաքանչյուր (հիմնական) բաղկացուցիչ (առանձնացնելի միավոր), որի սկզբնական արժեքը հիմնական միջոցի ամբողջ արժեքում էական է, կամ ունի տնտեսական օգուտների սպառման նշանակալիորեն տարբեր մոդել, կամ ունի նշանակալիորեն տարբեր օգտակար ծառայություն, հաշվառվում է որպես առանձին միավոր:

Կազմակերպությունը հիմնական միջոցի միավորի սկզբնավորման արժեքը բաշխում է ըստ դրա հիմնական բաղադրիչների:

Հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչները առանձնացնելուց հետո հիմնական միջոցի միավորի մնացած մասը ևս հաշվառվում է որպես հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչ (հիմնական միջոցի միավորի մնացորդային հիմնական բաղադրիչ): Որպես հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչ առանձին հաշվառվում է նաև հիմնական միջոցի միավորի անսարքությունների առկայության վերաբերյալ կանոնավոր լայնածավալ ստուգումների իրականացման ծախսումները (արժեքը), ինչպես նաև հիմնական միջոցի միավորի կանոնավոր լայնածավալ կապիտալ վերանորոգումների ծախսումները (արժեքը):

Հիմնական միջոցի միավորի հիմնական բաղադրիչները հիմնական միջոցի միավորի կազմում հաշվառվում են առանձին:

Սկզբնական չափում

Հիմնական միջոցները սկզբնապես չափվում են սկզբնական արժեքով (ինքնարժեքով):

Այլ կողմերից ձեռք բերված հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը և պարտադիր այլ վճարները, տրանսպորտային ծախսումները, ինչպես նաև ակտիվը իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ծախսումները: Գործարկման և նման նախաարտադրական ծախսումներն հիմնական միջոցների սկզբնական արժեքում չեն ներառվում: Ձեռք բերման գինը որոշելիս առևտրային զեղչերը, գների իջեցումները հանվում են:

Անհատույց ստացված հիմնական միջոցները սկզբնապես չափվում են իրական արժեքով, եթե հնարավոր չէ, ապա հաշվարկային փաստաթղթում նշված արժեքում:

Հետագա չափում

Հիմնական միջոցի միավորը որպես ակտիվ սկզբնական ճանաչումից հետո հաշվառվում է իր սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորի մաշվող գումարը պարբերաբար բաշխվում է ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայությունը արտահայտվում է ժամկետով:

Կազմակերպությունը հիմնական միջոցների խմբերի նկատմամբ կիրառում է հետևյալ օգտակար ծառայությունը.

<i>Դասի անվանում</i>	<i>Օգտ. ծառայություն (ֆինասական)</i>	<i>Օգտ. ծառայություն (հարկային)</i>
Շենքեր	100-130 տարի	20 տարի
Կառուցվածքներ	20 տարի	20 տարի
Փոխանցող հարմարանքներ	20 տարի	20 տարի
Տրանսպորտային միջոցներ	10 տարի	5 տարի
Մարքավորումներ	5 տարի	5 տարի
Արտադրատնտեսական գույք, գործիքներ	5 տարի	5 տարի
Հաշվողական և համակարգչային տեխնիկա	3 տարի	1 տարի
Մաշվող թանգարանային գույք	5 տարի	5 տարի
Մաշվող գրականություն	5 տարի	5 տարի

Հազվադեպ ու հնատիպ գրականության և թանգարանային գույքի համար սահմանված է անսահմանափակ օգտակար ծառայություն:

Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվի՝ ՖՀՄՍ 5-ի համաձայն որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու (կամ որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբում ներառվելու) և ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով:

Հիմնական միջոցի մաշվածության գումարը իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվելու համար կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

Հոդամասը ունի անսահմանափակ օգտակար ծառայություն, հետևաբար դրա համար մաշվածություն չի հաշվարկվում:

Ապաճանաչում

Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ապաճանաչվի, երբ՝

ա) այն օտարվում է, կամ

բ) ապագա ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում դրա օգտագործումից կամ օտարումից:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Սկզբնական չափում

Ոչ նյութական ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով (ինքնարժեքով):

Ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, չփոխհատուցվող հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները, ինչպես նաև ակտիվն իր նպատակային օգտագործման վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում: Ուղղակիորեն

վերագրվող ծախսումները ներառում են, օրինակ, իրավաբանական ծառայությունների դիմաց վճարները:

Ցանկացած առևտրային զեղչ և արտոնություն հանվում է՝ սկզբնական արժեքը ստանալու համար:

Հետագա չափում

Կազմակերպությունը ոչ նյութական ակտիվի միավորը որպես ակտիվ սկզբնական ճանաչումից հետո հաշվառում է իր սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստները:

Ամորտիզացիա

Ոչ նյութական ակտիվի մնացորդային արժեքը գնահատվում է զրո:

Ամորտիզացիան հաշվարկվում է այն պահից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար՝ հետևյալ օգտակար ծառայությունից ելնելով.

- Հաշվապահական համակարգչային ծրագիր 1-10 տարի
- Լիցենզիաներ 1 տարի
- Այլ ոչ նյութական ակտիվներ 10 տարի

Կազմակերպությունը կիրառում է ամորտիզացիայի հաշվարկման գծային մեթոդը:

Ապաճանաչում

Ոչ նյութական ակտիվը ապաճանաչվում է օտարման պահին կամ երբ դրա օգտագործումից և հետագա օտարումից այլևս չեն ակնկալվում ապագա տնտեսական օգուտներ:

3.4. Ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ

Ճանաչում

Կազմակերպությունը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը ճանաչում է, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ապաճանաչում

Կազմակերպությունը ֆինանսական ակտիվը ապաճանաչում է, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ այն փոխանցում է ֆինանսական ակտիվը և սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները:

Կազմակերպությունը ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչում է, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

Դասակարգում

Ֆինանսական ակտիվների կատեգորիաներն են՝

- ֆինանսական ակտիվ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Ֆինանսական պարտավորության կատեգորիաներն են՝

- ֆինանսական պարտավորություններ^a չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- այլ ֆինանսական պարտավորություններ:

Առևտրական դեբիտորական և կրեդիտորական պարտքերի չափում

Առևտրական դեբիտորական պարտքերը վերագրվում են «Փոխառություններ և դեբիտորական պարտքեր» խմբին, իսկ առևտրական կրեդիտորական պարտքերը՝ «Այլ ֆինանսական պարտավորություններ»:

Դեբիտորական պարտքերը չափվում են սկզբնական արժեքով (սկզբնական հաշվում նշված գումարով), բացառությամբ այն դեպքերի, երբ զեղչման ազդեցությունը զգալի է: Այս դեպքում դեբիտորական պարտքը չափվում է զեղչված արժեքով:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Կազմակերպությունը գնահատում է, թե արդյոք առկա է հայտանիշ, որը ցույց է տալիս, որ իր առանձին դեբիտորական պարտքը կամ դեբիտորական պարտքերի խումբը (պորտֆելը) կարող է արժեզրկված լինել:

Դեբիտորական պարտքերի հնարավոր արժեզրկման (անհավաքագրելիության) հայտանիշները ներառում են՝

ա) դեբիտորական պարտքերի հավաքագրման նախկին փորձի վերլուծությունը, որը ցույց է տալիս, որ դեբիտորական պարտքերի անվանական գումարը չի հավաքագրվելու,

բ) պարտապանի նշանակալի ֆինանսական դժվարությունները.

բ) պայմանագրի փաստացի խախտումը, օրինակ, գումարների չվճարումը կամ վճարման ուշացումը.

գ) պարտապանին նրա ֆինանսական դժվարությունների հետ կապված արտոնյալ պայմանների տրամադրումը.

դ) նախորդ հաշվետու ժամանակաշրջանում այդ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորստի ճանաչումը:

Կորստի գումարն իրենից ներկայացնում է դեբիտորական պարտքերի անվանական գումարի և դրանց մարման գնահատված գումարի զեղչված արժեքի միջև տարբերությունը: Կորստի գումարը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է որպես տվյալ ժամանակաշրջանի ծախս:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկումից (անհավաքագրելիությունից) կորուստը նվազում է, և այդ նվազումն օբյեկտիվորեն կարելի է կապել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքի հետ (օրինակ՝ դեբիտորական պարտքերի հավաքագրման կամ պարտապանի վճարունակության բարելավում), ապա դեբիտորական պարտքերի արժեքի իջեցումը հակադարձվում է: Հակադարձումը չպետք է հանգեցնի դեբիտորական պարտքերի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը կգերազանցեր այն արժեքը, որը կլիներ, եթե այդ դեբիտորական պարտքերի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկումը ճանաչված չլիներ:

Դեբիտորական պարտքը դուրս է գրվում հաշվեկշռից այն և միայն այն դեպքում, երբ Կազմակերպությունը կորցնում է վերահսկողությունը պայմանագրային իրավունքների նկատմամբ, որոնք կազմում են այդ ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը): Կազմակերպությունը կորցնում է այդ վերահսկողությունը, եթե այն իրացնում է պայմանագրով սահմանված օգուտների նկատմամբ իրավունքները, իրավունքների ուժի մեջ լինելու ժամկետը (հայցային վաղեմության ժամկետը) լրանում է կամ Կազմակերպությունը հրաժարվում է այդ իրավունքներից:

Սկզբնական ճանաչման պահին կրեդիտորական պարտքը չափվում է սկզբնական արժեքով (սկզբնական հաշվում նշված գումարով), բացառությամբ այն դեպքերի, երբ զեղչման ազդեցությունը զգալի է: Այս դեպքում կրեդիտորական պարտքը չափվում է զեղչված արժեքով:

Կրեդիտորական պարտքը դուրս է գրվում հաշվեկշռից այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրով սահմանված պարտականությունը կատարվել է, չեղյալ է համարվել կամ լրացել է դրա ուժի մեջ լինելու ժամկետը (հայցային վաղեմության ժամկետը):

Դեբիտորական և կրեդիտորական պարտքերը հաշվանցվում են այն դեպքերում, երբ Կազմակերպությունը՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և

բ) մտադիր է հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) գուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Մինչև մարման ժամկետ պահվող ներդրումների չափում

Մինչև մարման ժամկետ պահվող ներդրումը սկզբնապես չափվում է իր իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի ձեռքբերմանը:

Հետագա չափումը կատարվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ստացված վարկերի և փոխառությունների չափում

Ստացված վարկերը և փոխառությունները վերագրվում են «Այլ ֆինանսական պարտավորություններ» խմբին:

Ստացված վարկը և փոխառությունը սկզբնապես չափվում է իր իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը:

Սկզբնական չափումից հետո ստացված վարկը և փոխառությունը չափվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

3.5. Պաշարներ

Սկզբնական չափում

Սկզբնական ճանաչման պահին պաշարները չափվում են սկզբնական արժեքով (ինքնարժեքով):

Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռք բերման ծախսումները, պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Ձեռք բերման ծախսումներն են գնման գինը, ներմուծման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարները, որոնք համապատասխան մարմնի կողմից ենթակա չեն Կազմակերպությանը ետ վերադարձման, մաքսային բրոքեր (միջնորդ) հանդիսացող անձանց վճարվող գումարները, ինչպես նաև այդ պաշարների ձեռք բերման հետ կապված տրանսպորտային, բեռնման, բեռնաթափման և այլ ծախսումները:

Ձեռք բերման ծախսումները որոշելիս առևտրային զեղչերը, գների իջեցումները հանվում են:

Հետագա չափում

Պաշարները պետք է չափվեն ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքը իջեցվում է մինչև իրացման գուտ արժեքի մակարդակ՝ ըստ տեսակների հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

Պաշարների ինքնարժեքի՝ մինչև իրացման գուտ արժեք ցանկացած դուրս գրում ճանաչվում է ծախս այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ կատարվել է ինքնարժեքի իջեցումը: Պաշարների նախկինում դուրս գրված գումարի ցանկացած վերականգնում, որը առաջանում է իրացման գուտ արժեքի բարձրացումից, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ կատարվում է բարձրացումը:

Ոչ իրացվելի պաշարները դուրս են գրվում իրենց հաշվեկշռային արժեքով:

Ոչ իրացվելի են այն պաշարները, որոնք չեն իրացվել կամ օգտագործվել հաշվեկշռում հաշվառելուց 12 ամսվա ընթացքում և որոնք հավանական է, որ որևէ այլ ձևով չեն օգտագործվի՝ կապված դրանց բարոյական հնացման, որակի վատացման և այլ պատճառներով:

Ինքնարժեքի բանաձևեր

Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ նախագծերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը հաշվարկվում է կոնկրետ արտադրանքի ինքնարժեքի որոշման ճանապարհով:

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է ԱՄԱԵ արժեքով:

Ուսուցման ծառայության ինքնարժեքը

Ուսուցման ծառայության ինքնարժեքը կազմված է անմիջականորեն ծառայություն մատուցելու գործում զբաղված անձնակազմի (դասախոսների) վարձատրության ծախսումներից, օգտագործվող նյութերի ծախսումներից, ինչպես նաև ծառայություն մատուցելու հետ կապված համապատասխան արտադրական վերադիր (փոփոխուն և հաստատուն) ծախսումներից:

3.6. Եկամուտներ և ծախսեր

Զափում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով:

Սովորաբար հատուցումը ունի դրամական միջոցների կամ դրամական միջոցների համարժեքի տեսք, իսկ հասույթը՝ ստացված կամ ստացվելիք դրամական միջոցների կամ դրանց համարժեքների գումարն է:

Երբ պայմանավորվածության արդյունքում գործարքը վերածվում է ֆինանսականի, հատուցման իրական արժեքը որոշվում է բոլոր ապագա վճարումների գեղչման հիման վրա՝ կիրառելով պայմանական տոկոսադրույքը: Պայմանական տոկոսադրույքն ավելի հստակ որոշվում է՝

ա) նման վարկունակություն ունեցող թողարկողի նմանատիպ ֆինանսական գործիքի համար գերակշռող դրույքաչափով, կամ՝

բ) տոկոսադրույքով, որը գեղչում է ֆինանսական գործիքի անվանական գումարը՝ այն հասցնելով ապրանքների կամ ծառայությունների ընթացիկ վաճառքի գնին:

Իրական արժեքի և հատուցման անվանական գումարի տարբերությունը ճանաչվում է տոկոսային հասույթ:

Ապրանքների վաճառք

Ապրանքների վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է, երբ բավարարված են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) Կազմակերպությունը գնորդին է փոխանցում ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և փոխհատուցումների մեծ մասը.

բ) Կազմակերպությունը չի պահպանում՝

I. կառավարման այն չափի մասնակցություն, որը բխում է սեփականության իրավունքից,

II. վաճառված ապրանքների նկատմամբ վերահսկողություն.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն, և՝

ե) գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսերը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Երբ ապրանքները վաճառվում են, դրանց հաշվեկշռային արժեքը պետք է ճանաչվի որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը:

Ծառայությունների մատուցում

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է ֆինանսական հաշվետվության ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն.

գ) հնարավոր է արժանահավատորեն որոշել հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանը, և՛

դ) հնարավոր է արժանահավատորեն որոշել գործարքի կատարման ժամանակ արված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Գործարքի ավարտվածության աստիճանը որոշվում է ներքոթվարկյալ մեթոդներից որևէ մեկով (Կազմակերպությունը կիրառում է այն մեթոդը, որով հնարավոր է առավել արժանահավատորեն չափել մատուցված ծառայությունները)՝

ա) կատարված աշխատանքների ուսումնասիրություն.

բ) տվյալ ամսաթվի դրությամբ մատուցված ծառայությունների ծավալի և մատուցվելիք ծառայությունների ամբողջ ծավալի հարաբերակցություն, կամ՝

գ) տվյալ ամսաթվի դրությամբ կատարված ծախսումների և գործարքի գնահատված ընդհանուր ծախսումների ծավալի հարաբերակցությունը:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, հասույթը ճանաչվում է միայն ճանաչված այն ծախսերի չափով, որոնք կփոխհատուցվեն:

Կազմակերպության կողմից մատուցված ծառայությունների իրացումից հասույթը ճանաչվում է.

ա) ուսուցման մատուցման ծառայությունների գծով՝ ուսանողի տարեկան վարձավճարը բաժանելով 12-ի՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր ամսում կատարվելիք ճշգրտումները (մասնավորապես նոր ընդունված, հեռացված, տարկետված ուսանողների գծով).

բ) այլ ծառայությունների գծով՝ դրանց մատուցմանը զուգընթաց՝ յուրաքանչյուր ամսվա կտրվածքով:

3.7. Գործառնական վարձակալություն

Գործառնական վարձակալության տրված (ստացված) ակտիվները ճանաչվում են վարձատուի հաշվեկշռում:

Որպես վարձակալ, գործառնական վարձակալության գծով վարձավճարները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են որպես ծախս կամ ծախսում գծային հիմունքով, եթե մեկ այլ սխտեմատիկ հիմունք ավելի լավ չի ներկայացնում ակտիվի օգտագործումից օգուտների ստացման ժամանակային գրաֆիկը:

3.8. Աշխատակիցների հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Կազմակերպությանը մատուցել է ծառայություն, Կազմակերպությունը, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղչված գումարը, որոնք ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղչված գումարը, Կազմակերպությունը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ ՖՀՄՄ-ներով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, պաշարների, հիմնական միջոցների դեպքում):

Կազմակերպությունը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է՝

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ տարեկան արձակուրդը)՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ, և

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակությունը)՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Կազմակերպությունը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափում է որպես լրացուցիչ գումար, որը Կազմակերպությունը ակնկալում է վճարել որպես հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք: Ընդ որում այդ հաշվարկներում ներառվում է նաև պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասը:

3.9. Շահութահարկի գծով ծախս

Ընթացիկ հարկ

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառվեն մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:

Այլ տեղեկատվության բացակայության դեպքում Կազմակերպությունը կիրառում է 20% դրույք՝ հարկվող ժամանակավոր տարբերությունների և օգտագործվող նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների նկատմամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն գեղջվում (դիսկոնտավորվում):

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Կազմակերպությունը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում վերականգնվում է այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Եկամուտ կամ ծախս ներկայացում

Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս և ներառվում են տվյալ ժամանակաշրջանի գուտ շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ հարկերն առաջանում են՝

ա) գործարքից կամ իրադարձությունից, որը նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում անմիջականորեն ճանաչվում է սեփական կապիտալում կամ՝

բ) իրենից ձեռքբերում ներկայացնող ձեռնարկատիրական գործունեության միավորումից:

Ընթացիկ և հետաձգված հարկը ուղղակիորեն դեբետագրվում կամ կրեդիտագրվում է սեփական կապիտալին, եթե հարկը վերաբերում է այն հոդվածներին, որոնք, նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում, ուղղակիորեն դեբետագրվում կամ կրեդիտագրվում են սեփական կապիտալին:

Հաշվանցում

Կազմակերպությունը ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և՝

բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) գուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Կազմակերպությունը հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցելու հետաձգված հարկային ակտիվները հարկային պարտավորությունների դիմաց, և՝

բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից՝

I. նույն հարկատուից (հարկվող միավորից), կամ՝

II. տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվները գուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվները և մարել պարտավորությունները միաժամանակ՝ յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների զգալի գումարների մարում կամ փոխհատուցում:

3.10. Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն կապված են որակավորվող ակտիվի ձեռք բերման, կառուցման կամ արտադրության հետ, կապիտալացվում են որպես տվյալ ակտիվին վերագրվող ծախսումների (ինքնարժեքի) մի մաս: Մնացած այլ դեպքերում փոխառության

ծախսումները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվում (հաշվեգրվում) են:

3.11. Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ

Ֆունկցիոնալ արժույթ

Ֆունկցիոնալ արժույթը որոշելիս Կազմակերպությունը հաշվի է առնում ստորև նշված գործոնները՝

ա) արժույթը՝

-որը հիմնականում ազդում է ապրանքների և ծառայությունների վաճառքի գների վրա (հաճախ այն արժույթը, որով իր ապրանքների և ծառայությունների վաճառքի գները սահմանվում և հաշվարկները կատարվում են), և

-այն երկրի արժույթը, որի մրցակցային գործոններն ու կանոններն են հիմնականում որոշում իր ապրանքների և ծառայությունների վաճառքի գները.

բ) արժույթ, որը հիմնականում ազդում է ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ աշխատուժի, նյութական և այլ ծախսումների վրա (նշվածը հաճախ այն արժույթն է, որով նման ծախսումները սահմանվում և կատարվում են):

Կազմակերպության ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է:

Սկզբնական ճանաչում

Արտարժույթով գործառնությունը սկզբնապես ճանաչման պահին հաշվառվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:

Որպես սփոթ փոխանակման փոխարժեք ընդունվում է արժույթային շուկայում ձևավորված արտարժույթների միջին փոխարժեքը՝

	<i>31.12.2012</i>	<i>31.12.2011</i>
	<i>ՀՀ դրամ</i>	<i>ՀՀ դրամ</i>
<u>1 ԱՄՆ դոլար</u>	<i>403.58</i>	<i>385.77</i>
<u>1 Եվրո</u>	<i>532.24</i>	<i>498.72</i>
<u>1 Ռուբլի</u>	<i>13.27</i>	<i>11.98</i>

Հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների վերջի դրությամբ տեղեկատվության ներկայացում

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին՝

ա) արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը.

բ) սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով և

գ) իրական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում (ներկայացվում) են իրական արժեքի որոշման օրվա փոխանակման փոխարժեքով:

Փոխարժեքային տարբերությունների ճանաչումը

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ

ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են, բացառությամբ՝

3.12. Պահուստներ

Կազմակերպությունը ճանաչում է պահուստ, երբ՝

ա) ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի (պարտավորեցնող դեպք) արդյունք,

բ) հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և

գ) պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Պահուստ ճանաչված գումարը իրենից ներկայացնում է հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պահուստները վերանայվում են և ճշգրտվում՝ արտացոլելու համար ընթացիկ լավագույն գնահատականը: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը հակադարձվում է:

Եթե պահուստը ճանաչվել է ներկա (զեղչված) արժեքով, ապա պահուստի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում ավելացվում է՝ արտացոլելու համար ժամանակի անցնելու փաստը: Այդ ավելացումը ճանաչվում է որպես տոկոսային ծախս:

Պահուստը օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.13. Պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ

Կազմակերպությունը չի ճանաչում պայմանական ակտիվը և պայմանական պարտավորությունը:

Պայմանական պարտավորությունները շարունակաբար գնահատվում են՝ որոշելու համար՝ արդյոք տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքը դարձել է հավանական, թե ոչ:

Պահուստ ճանաչվում է այն բանից հետո, երբ հավանական է դառնում, որ նախկինում որպես պայմանական պարտավորություն դիտվող հոդվածի գծով կպահանջվի ապագա տնտեսական օգուտների արտահոսք:

3.14. Սխալներ

Կազմակերպությունը ուղղում է նախորդող ժամանակաշրջանի էական սխալները հետընթաց, բացառությամբ երբ անհրազորձելի է կոնկրետ ժամանակաշրջանի վրա սխալի հետևանքների կամ դրա կուտակային հետևանքների որոշումը՝ դրանց հայտնաբերումից հետո հրապարակման համար հաստատված առաջին ֆինանսական հաշվետվությունների փաթեթում՝

ա) վերահաշվարկելով ներկայացված այն նախորդող ժամանակաշրջանի (ժամանակաշրջանների) համեմատելի գումարները, որոնցում տեղի է ունեցել սխալը, կամ

բ) եթե սխալը տեղի է ունեցել նախքան մինչև ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանը, ապա ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի սկզբնական մնացորդները վերահաշվարկելով ներկայացված նախորդող ամենավաղ ժամանակաշրջանի համար:

3.15. Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխություններ

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը, բացառությամբ ստորև շարադրվածի, ճանաչվում է առաջընթաց՝ արտացոլվելով շահույթի կամ վնասի մեջ՝

ա) փոփոխման ժամանակաշրջանում, եթե փոփոխությունն ազդում է միայն տվյալ ժամանակաշրջանի վրա, կամ

բ) փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է:

Այնքանով, որքանով հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունն առաջացնում է ակտիվների և պարտավորությունների փոփոխություն կամ առնչվում է սեփական կապիտալի որևէ հոդվածի հետ, այն ճանաչվում է համապատասխան ակտիվի, պարտավորության կամ սեփական կապիտալի հոդվածի հաշվեկշռային արժեքի ճշգրտման միջոցով՝ փոփոխության ժամանակաշրջանում:

Այն դեպքերում, երբ դժվար է տարբերակել հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխությունից, այն դիտվում է որպես հաշվառման գնահատման փոփոխություն՝ համապատասխան բացահայտմամբ:

3.16. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխություններ

Կազմակերպությունը պետք է փոփոխի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե այդ փոփոխությունը՝

ա) պահանջվում է որևէ ՖՀՄՄ-ով, կամ

բ) հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում կազմակերպության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ և տեղին (ռելևանտ) տեղեկատվության ներկայացմանը:

Եթե Կազմակերպությունը հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է հետընթաց, ապա հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառում է նախորդող ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվության նկատմամբ՝ հետ գնալով այնքան ժամանակաշրջան, որքան քաղաքականության հետընթաց կիրառումը իրագործելի է: Հետընթաց կիրառությունը նախորդող ժամանակաշրջանի նկատմամբ իրագործելի չէ, քանի դեռ հնարավոր չէ որոշել այդ ժամանակաշրջանի ֆինանսական վիճակի մասին հաշվետվության սկզբնական և վերջնական մնացորդների կուտակային հետևանքը: Ճշգրտման հանրագումարը, որը վերաբերում է ֆինանսական հաշվետվություններում ներկայացված ժամանակաշրջաններին նախորդող ժամանակաշրջաններին, վերագրվում է ամենավաղ ժամանակաշրջանում ներկայացված սեփական կապիտալի յուրաքանչյուր ազդեցություն կրած բաղադրիչի սկզբնական մնացորդին: Սովորաբար, ճշգրտումը վերագրվում է չբաշխված շահույթին: Այնուամենայնիվ, ճշգրտումը կարող է վերագրվել սեփական կապիտալի մեկ այլ բաղադրիչի (օրինակ՝ մեկ այլ ՖՀՄՄ-ի պահանջները բավարարելու նպատակով):

Երբ Կազմակերպության համար անիրագործելի է հաշվապահական հաշվառման նոր քաղաքականությունը կիրառել հետընթաց՝ բոլոր նախորդող ժամանակաշրջանների նկատմամբ նոր քաղաքականության կիրառման կուտակային հետևանքը որոշելու անկարողության պատճառով, ապա Կազմակերպությունը նոր քաղաքականությունը կիրառում է առաջընթաց՝ հնարավոր ամենավաղ ժամանակաշրջանից սկսած: Այդ դեպքում Կազմակերպությունը հաշվի չի առնում ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի՝ մինչ այդ ամսաթիվն

առաջացող կուտակային ճշգրտման բաժինը: Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն թույլատրվում է, եթե նույնիսկ հնարավոր չէ այդ քաղաքականությունը առաջընթաց կիրառել ցանկացած նախորդող ժամանակաշրջանի համար:

3.17. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Կազմակերպությունը ճշգրտում է իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

Կազմակերպությունը չի ճշգրտում իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով:

4. Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ ըստ ստորաբաժանումների և դուստր ընկերությունների

31.12.2012թ.

‘000 դրամ

	<i>Համախմբված</i>	<i>այդ թվում</i>					
		<i>ԵՊՀ</i>	<i>Իջևան</i>	<i>Քենդլ</i>	<i>ԵՊՀ տպագրատուն</i>	<i>ԵՊՀ հրատարակչություն</i>	<i>ԵՊՀ ԵՀԿ</i>
1	2	3	4	5	6	7	8
Ակտիվ							
Հիմնական միջոցներ	47,630,432	47,188,276	441,838	-	141	178	-
Ոչ նյութական ակտիվներ	26,460	26,159	-	251	-	-	50
Կենսաբանական ակտիվներ	85	85	-	-	-	-	-
Դուստր ընկերություններում ներդրումներ	-	150	-	-	(50)	(50)	(50)
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար	9,557	9,557	-	-	-	-	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	47,666,534	47,224,227	441,838	251	91	128	-
Պաշարներ	146,177	143,667	201	-	2,117	192	-
